

«Վէմ»-ի ղեկավար սկզբունքն
է լինելու գիտական
ատարկայականութիւնն
ու ճշմարտութիւնը,
միայն ճշմարտութիւնը,
ամբողջ ճշմարտութիւնը՝
համոզած, որ անգամ ամենադառն
ճշմարտութիւնը աւելի օգտակար է,
քան ոսկեզօծ ու շաքարապատ
ստալը»:

Միմոն Վրացեան

Խմբագիր՝ Գեւորգ ԽՈՒԴԻՆՅԱՆ

ԼԱՅԱՍՏԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վլադիմիր Բարխուդարյան
Սերգեյ Սարինյան
Աշոտ Մկրտչյան
Ռուբեն Սաֆրաստյան
Արերտ Ստեփանյան
Մուրեն Դանիելյան
Համլետ Պետրոսյան
Սամվել Մուրադյան
Լևոն Մկրտչյան

ՍՓՅՈՒՌ

Երվանդ Փամբուկյան - Լիբանան
Մկրտիչ Մկրտչյան - Լիբանան
Հարություն Բյուրքյան - Հունաստան
Կարո Արմենյան - ԱՄՆ
Ռուբինա Փիրումյան - ԱՄՆ
Վաչե Բրուտյան - ԱՄՆ

«Վէմ» համահայկական հանդես
Հրատարակիչ՝ «Վէմ հանդէս» ՍՊԸ

375010 Երևան, Մինր Մկրտչյան փ. 12/1
հեռախոս՝ 52 18 76, 093 83 93 24

Էլ. փոստ՝ khoudinyan@yahoo.com

Ինտերնետային կայք՝
vemjournal.org

ISSN 1829 - 1864

համահայկական հանդես
է (ԺԳ) տարի, 2015,
թիվ 1 (49), հունվար-մարտ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ Եղեռնի Հիշողութեան ԳԼՈՐԱԿԱՑՈՂ ԱՇԽԱՐՀՈՒՄ	3	ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ <i>Դավիթ Կ. Բարսեղյան (Արևիկապետ)</i> ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՏՆՂՆ ՈՒ ԳԵՐԸ «ԱՍՏՎԱԾԱՇՆՉՈՒՄ» ԱՇԽԱՐՀԱՐԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄՆՋ	155
ՀԻՄՆԱՔԱՐԵՐ <i>Ռոմիկ Խ. Քոչարյան</i> «ԲԱՑ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ» ԽՆԴՐԱԿԱՐԳԸ ԵՎ Վ. ԴԻԼԹԱՅԻ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ՀԱՅՅԱԿԱՐԳԸ	9	<i>Հովհաննես Գ. Խորիկյան (Գյումրի)</i> ԼՅՈՒԿԻՄԱՆ ԱՔԵՄՆՆՅԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՌԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱՐԳՈՒՄ	164
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ <i>Արման Ս. Եղիազարյան</i> ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ Մաս երկրորդ: Հայոց թագավորության վերահաստատումը	36	ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ <i>Վալերի Ա. Միրզոյան</i> ՍԻՄՈՆ ԶԱԿԱՐԵԱՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌՎՎԱՐՄԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ Ծննդյան 150-ամյակի առիթով	172
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ <i>Այա Ա. Խառարյան</i> ՁԱՅՆԻ ԱԼՅՈՒՋԻԱՆ ՇՇՈՒԿՆԵՐՈՒՄ Ըստ ռուսիական գրող Վարուժան Ոսկանյանի «Շշուկների մատյան» վեպի	61	ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ <i>Սմբար Խ. Հովհաննիսյան</i> ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՈՆՏԻԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ Ստորումներ Արևրտ Ստեփանյանի «Պատմության հետազոծը: Գործք, գրույթ, իմաստ» մենագրության առթիվ	183
ԼԵԶՎԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ <i>Նարինե Հ. Դիրարյան</i> ՆՈՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՔԵԼ ՍՅՈՒՆԵՑՈՒ «ԱՂԱՄԳՐՔՈՒՄ» Դրախտից դժոխք, ապա վերստին դրախտ ճանապարհին	78	<i>Լավրենտի Շ. Հովհաննիսյան</i> ԱՐԺԵՔԱՎՈՐ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ Seda K. Gasparyan-The Armenian Genocide: A Linguocognitive Perspective	193
ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ <i>Աշոտ Վ. Ոսկանյան</i> «ԼԻՆԵԼ» ՀԱՅԵՐԵՆ Մարտին Հայդեգերի «Գոյություն և ժամանակ» աշխատության մի քանի առանցքային եզրերի հայերեն թարգմանության խնդրի շուրջ	86	ԱՐԻՒՎ <i>Անահիտ Զ. Քոչարյան</i> ՀԱՅՐԵՆԻՔԻ ՓՐԿՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	198
ԱՇԽԱՐՀԱՐԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ <i>Մնացական Ա. Սաֆարյան</i> ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԶԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԾՐՈՒՄ	97	<i>Արարատ Մ. Հակոբյան</i> ՄԻ ԱՄՐԱՍՏԱՆԱԳԻՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՀԵՂԿՈՄԻ ԽԱՅՏԱՌԱԿ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ	228
<i>Սասուն Լ. Սարիբեկյան</i> ԱՂԱՆԴՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԱՐԱՂԱՔԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	111	ՀԱՎԵԼՎԱԾ <i>Սուրեն Գ. Դանիելյան</i> ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՑԵԱՆ. Էպիբական անջրպետի նուաճումը	1 (237)
ՄՇԱԿՈՒՅԹ <i>Ռուբեն Ս. Անգալադյան (Սանկր Պետրոս)</i> ԵՐՎԱՆԴ-ՔՈՉԱՐ. ՀԱՄԱԿ ԽՈՆԱՐՀՈՒՄ	122	CONTENT	261
ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ <i>Գագիկ Գ. Դանիելյան</i> ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ Արարական աղբյուրների քննություն	141	СОДЕРЖАНИЕ	262

Սմբատ Խ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊՈՆՏԻԿԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՔՍՏԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մտորումներ Ալբերտ Ստեփանյանի «Պատմության
հետազիծը: Գործք, գրույթ, իմաստ» մենագրության առթիվ *

Բանալի բառեր – քաղաքակրթություն, քաղաքակրթական ինքնություն, տրամատույթ (discours), պատում (narrative), համաժամանակյա և տարժամանակյա չափույթներ, կենսաշխարհի և համակարգ, նշանային (սեմիոտիկ) շարակարգ, նշանային ազգակցություն, պատմության պոետիկա:

Մուտք

Արդի ժամանակներում պատմագիտության մեջ հույժ կարևորվում է ներտքստային միասնության «հաստատությունական ներփակության» (une clôture institutionnelle) միագծությունը հաղթահարելու միտումը¹: Հատկապես, երբ նկատի է առնվում, որ պատմագիտական շարադրանքը և տեքստը պարառում են արտատեքստային բազում իմաստներ, որոնք առանձնահատուկ ներգործություն ունեն տեքստային տեղեկատվության ողջ մակարդակի վրա: Արդյունքում ի հայտ է գալիս արտատեքստային կամ վերտեքստային մի կառույց, որը հայտնի է տրամատույթ (discours) անվամբ: Մի բան, որը սկսվում է այնտեղ, որտեղ ի հայտ են գալիս տեքստերի բառացի հասկացումից տարբեր հավելյալ իմաստներ:

Նման առանձնահատկություններով է օժտված պրոֆեսոր Ա. Ստեփանյանի նոր՝ «Պատմության հետազիծը: Գործք, գրույթ, իմաստ»² մենագրությունը: Մասնավորապես, երբ այն դիտարկում ենք քաղաքակրթական ինքնության համատեքստում: Գիրք, որը համակարական կապ ունի նախորդ՝ «Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում»³ գրքի հետ:

է (ԺԳ) քաղթ, թիվ 1 (49) հունվար-մարտ, 2015
վէւ համահայկական համալս

*Ընդունվել է տպագրության 20.02.2015:

1 Տե՛ս Ph. Lacoue-Labarthe et J.-L. Nancy (Dir.), Les Fins de l'homme: à partir du travail de Jacques Derrida : colloque de Cerisy (23 juillet-2 août 1980), Paris : Galilée, 1981, p. 529.

2 Ալբերտ Ստեփանյան, Պատմության հետազիծը: Գործք, գրույթ, իմաստ, Եր., «Փրինթինֆո», 2014, 496 էջ:

3 Ա. Ստեփանյան, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում. Արտաշիսյան դարաշրջան, Գիրք Ա, Եր., «Սարգիս Խաչենց & Փրինթինֆո», 2012, 385 էջ:

1. Պատմության տեքստի իմաստային շարակարգությունը

Պատկանելով հատվածային մենագրության ժանրին՝ պրոֆեսոր Ա. Ստեփանյանի գիրքը նվիրված է հին հունական, հելլենիստական և հայոց քաղաքակրթական ինքնության տարաբնույթ հիմնախնդիրներին: Հետազոտական հետաքրքրությունը քաղաքակրթական հեռանկարն է: Ինչպես «**Երկու խոսք**» ներածականում խորհուրդ է տալիս հեղինակը, տեքստի ընթերցումը մեկնարկելի է **ընթերցողի հակառակ հեռանկարից**, որպեսզի հընթացս ընթերցումի հնարավոր լինի **հանդիպումը հեղինակի** հետ⁴: Իսկ դա հնարավոր է հատկապես գրքի կառույցից մեկնարկելու դեպքում, որը կազմված է հետևյալ բաժիններից՝

«Մուտք – Գործք – Գրույթ – Իմաստ – Ավարտ»:

Միասնական մի խաղընթաց, որի ծիրում հետազոտական ծրագիրն իրագործվել է տարբեր գիտակարգերի համադրությամբ՝ պատմություն և իմաստասիրություն, բանասիրություն և նշանագիտություն, քաղաքագիտություն և ընկերաբանություն: Ընդ որում՝ անցյալատեսական այս հեռանկարում «գերակայում է արտածական տրամասույթը՝ գաղափարից եղելույթ, նշանից իմաստ, ամբողջից հատված»: Ավելի կոնկրետ՝

Մուտք

Ինքնության քաղաքակրթական չափումը (Նախնական դատողություններ):

Գործք

К государственной политике царя Артавазда II, Տնտեսական, ընկերային և մտահոգևոր կերպափոխությունները Մեծ Հայքում (Ք.ա. 60–30–ական թթ.),

Great Armenia and Euphrates Frontier in 60–s A.D. (Conflict, ideas, settlement),

Պատմական ժամանակի կառույցը և բովանդակությունը (Մեծ Հայքը Ք.ա. II – Ք.հ. V դդ.):

Գրույթ

Տարտամ անցյալականությունից դեպի պատմություն. տեքստ, պատում, մեկնություն,

Մեթոդորոս Սկեփսացի. պատմասիրական համակարգի վերականգնման փորձ,

Полибий и вопросы теории государства в географии Страбона,

К интерпретации страбоновой версии истории Армении,

On the Basic Idea of the History of the Armenians by Moses Khorenatsi:

Իմաստ

Արխայիկ դարաշրջանի Հունաստանը. կենսատարածքի տեխնոլոգիական կերպափոխումը,

К теоретическим аспектам классической модели социального общежития (Древнегреческий город–государство),

Idea of Cosmic and Social Recurrence in Armenian Intellectual Tradition (The Epic Sasna Tsrer and Moses Khorenatsi),

Метаморфозы цивилизационной идентичности древних армян.

Ավարտ

«Քաղաքակրթություն–թանգարան» իմաստային շրջափոխությունը (տեսական հարցադրումներ):

Ուշագրավ է, որ գրքի նման կառույցը բխում է անտիկ աշխարհատեսության հիմնակազմիկ եզրերից մեկի՝ «ոսկե միջինի» նկատառումից, որը ենթադրում է «տրամախոսական կառույց», և որի համաձիքում որակի երկու ներհակ դրսևորումների (պակասույթ և հավելույթ) ժխտման ճանապարհով բացահայտվում են

4 Անդ, էջ 11:

հարամնա արժեքները՝ սկսած Ազգային ինքնությունից, Մեծ Հայքի կերպափոխություններից, Արտավազդ II-ի կամ Մերթրոդորոս Սկեփսացու արքեպիսկոպիտից, վերջացրած քաղաքակրթություն-թանգարան իմաստային շրջափոխությամբ: Ընդ որում՝ գրքի եռադիւս ընթացքի մեջ ներառված տեքստերը «միմյանց նկատմամբ գտնվում են այլափոխական սահքի մեջ»՝ կազմելով այն հարակարգությունը, որն այս դեպքում կոչվում է «Պատմության հետագիծ»:

Գիրքը կառուցված է մի կողմից՝ **Պլատոնի**, մյուս կողմից՝ **Արիստոտելի** փորձառության հեռանկարում, այն է՝ համակեցական և տեքստային եռակազմության հղացքի վրա և, հարկավ, ուրույն համադրական տարբերումով: Ուշագրավն այստեղ այն է, որ հեղինակը **պատումը** (narrative), որը կառուցված է «ըստ զարգացման սկզբունքի», այսինքն՝ ունի իր հստակ բովանդակային սկիզբը, զարգացումը և ավարտը (Արիստոտել), լծորդել է հոգու կառույցին (Պլատոն), որն իր խորքային բովանդակությամբ մարդակերպ-մարդակենտրոն է:

Վերոհիշյալից էլ՝ հիպերտեքստային երկու **բանալի-հարացույցներ**, որոնցով պետք է իրականանան թե՛ ուղղակի տեքստի ընթերցումը և թե՛ տեքստի հետազոտությունը:

Առաջինի դեպքում (Պլատոնյան հեռանկար) գործ ունենք ընթերցում-հետազոտության մի տեսակի հետ, որն իրագործվում է համակեցության ծիրում, և որտեղ հոգեկերտվածքի նշված եռաչափությունը ներկայանում է **կենսագրական դերակատարությունների պայցմամբ**: Ըստ այդմ՝ գիրքն իր եռակազմությամբ ներփակ ամբողջություն չէ, այլ բազում մուտքերով ու բազում ելքերով մի կառույց՝ իր թափանցիկությամբ և այլացմամբ: Շնորհիվ դրա՝ Գործքը հաջորդ պահին կարող է դիտարկվել իբրև Իմաստ, իսկ Իմաստը՝ Գործք, Գրույթը՝ Իմաստ, Իմաստը՝ Գրույթ և այլն: Ըստ այսմ՝ հեղինակը, կիրառելով պլատոնական այս հարացույցը, պահպանելով դրա ինչ-ինչ հատկորոշիչներ, այդուամենայնիվ նրան հավելել է նոր բովանդակություն:

Ասվածի նման ընթերցման հիմք է տալիս հատկապես **Հաբերմասի տեսությունը**, որի շրջագծում էլ կարող ենք հետևել նման կերպափոխության՝ **կենսաշխարհից դեպի բանականորեն կազմակերպված համակարգ և համակարգից դեպի կենսաշխարհ**⁵: Ռիթմ, որի ծիրում է ի հայտ գալիս գրույթը, մի կողմից՝ իբրև **ինքնագրույթ**, իբրև **բանական կենսագրություն**, մյուս կողմից՝ իբրև **հղացք**, իբրև **պատմափոխական հարացույց**:

Ասվածի լավագույն վկայությունն է գրքում տեղ գտած «Մերթրոդորոս Սկեփսացի. պատմասիրական համակարգի վերականգնման փորձ»⁶ խորագրով հետազոտական ակնարկը (որն իրականում մենագրության կշիռ ունի): Հեղինակի բնորոշմամբ, հնարավոր է դարձել «հեռանալու հողվածների ժողովածուի փորքինչ արհեստածին ժանրից և մոտենալու մենագրության ժանրին»⁷: Եվ կարող ենք ասել, որ գործ ունենք ոչ թե մեկ, այլ բազում գրքերի հետ: Այլ կերպ ասած՝ Ստեփանյանի «Պատմության հետագիծը» ուղղակի հետագիծ չէ. այն այս դեպքում կարող ենք բնորոշել իբրև «Պատմության գրադարան»՝ իր բարձրագույն իմաստով:

Երկրորդի դեպքում (Արիստոտելյան հեռանկար) գործ ունենք ընթերցում-հետազոտության մի տեսակի հետ, որը պատումային խաղընթացների (այուժենների) բազմազանությունը համարելում-համակշռում է գծային հեռանկարում: Այն է՝ իբրև պատումային սկիզբ, միջին և ավարտ, երբ **սկիզբը** համարվում է իմաստային այն սահմանը, որը տարանջատում է հեղինակին առտնին տարածությունից: **Միջինը** ստեղծագործության կիզակետն է, որտեղ հանդիպում են երկեստային տարրերը (կամ պատճառները)՝ տանելով պատումը դեպի ավարտ: Եվ **ավարտն** արդեն հանգուցալուծումն է՝ հեղինակի ստեղծարար ներուժի կայա-

5 Տե՛ս J. Habermas, The Theory of Communicative Action / Translated by Thomas McCarthy, Volume II: Lifeworld and System : A Critique of Functionalist Reason, Boston: Beacon Press Edition, 1987, pp. 113-152.

6 **Ալբերտ Ստեփանյան**, Պատմության հետագիծը: Գործք, գրույթ, իմաստ, Եր., «Փրինթինֆո», 2014, էջ 194-211:

7 **Ալբերտ Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 10:

ցումը: Հենց նման ընթացումի համատեքստում է, որ թերևս տեղի է ունենում ընթերցողի և հեղինակի հանդիպումը, ընդ որում՝ հեղինակային բազմաձայնությամբ: Միևնույն ժամանակ, սակայն, գծային հոլովույթը բացվում է **բնագան-ցական հեռանկարի** (մետաֆիզիկա) համաձիթում, որպեսզի հնարավոր լինի խուսափել տեքստային ներփակությունից: Նոր մի հեռանկար, որտեղ պատմագետի **պահուստի նյութերը** ընտրվում, հարակարգվում և մեկնաբանվում են արդի պատկերացումների համաձայն:

Ըստ այսմ՝ «մենագրության շարակարգությունը ցոլանում է իբրև իմաստային մի շարժում, որը խնդիր ունի պարառելու պատմության երեք կարևորագույն տիրույթներ՝ եղելույթը (գործք), պատումը (գրույթ) և մեկնության հնարավորությունը (իմաստ)»⁸: Սակայն այդ եռաչափությունը կազմակերպվել է յուրօրինակ մի շեղումով, այն է՝ դրանց հավելված են պատումային «Մուտքը» և «Ավարտը»: Վերջիններս կազմակերպված են ըստ միմյանց հակակշռումի սկզբունքի, բայց և խորքային առումով փոխլրացնում են միմյանց:

Որպեսզի հնարավոր լինի պատմության և արխատոտեյան այս փոխլրացական հեռանկարը, հեղինակն իր մտադրությունն իրականացրել է **քաղաքակրթական ինքնության** համապատկերում՝ նախ՝ «չկառուցելով մենագրությունն ըստ սոսկ հետահայացության գաղափարի», ապա՝ ստեղծելով «մի նոր մետատեքստ»⁹: Այն է՝ այդ երկու ձայները (պատմության և արխատոտեյան), միահյուսվելով պատմությանին **չեզոք ձայնի** ոլորտում, ստեղծում են **քաղաքակրթության գիրքը**¹⁰:

Բայց որպեսզի **Քաղաքակրթության գիրքը** հնարավոր լինի դիտարկել իբրև պատմության խաղընթաց, հեղինակն այն կառուցել է նաև ըստ համաժամանակյա և տարժամանակյա չափույթների: **Համաժամանակյա չափույթը** հնարավորություն է տվել հեղինակին մի կողմից՝ լծորդել, ի մի բերել տարբեր տարիներին գրված տեքստերն ըստ «**իմաստային շարակարգության**», մյուս կողմից՝ չեզոքացնել քաղաքակրթական և ժամանակագրական տարածության տարասեռությունները: Ընդ որում, նման շարակարգումը թույլ է տալիս նաև «առօրեական կենսընթացը վերակերպավորել իբրև հետազոտական կենսագրություն»¹¹:

Իսկ **տարժամանակյա չափույթը** հնարավորություն է տվել հաղթահարել «սեփական անցյալի և դրա արդյունքների» տարտամությունը՝ պարտադրելով դրանց «միասնական պատումի որակներ»: Հեղինակի խոստովանությամբ՝ շնորհիվ դրա հնարավոր է դարձել «բացահայտելու վերջինիս գծային հեռանկարն» իբրև քաղաքակրթության ավելի դինամիկ պատկեր¹²:

Համաժամանակյա և տարժամանակյա չափույթների համադրմամբ բազմաթիվ հայեցակարգեր մի հետազոտական ակնարկից ճյուղավորվում և բացվում են այլ հետազոտական ակնարկներում ևս: Օրինակ՝ «**ինքնության քաղաքակրթական չափումը (Նախնական դատողություններ)**» հետազոտական ակնարկում արծարծվող Պլատոնի հայեցակարգում ներկայացված ինքնության երեք տարատեսակները¹³ ավելի մանրամասնորեն և արդեն այլ հեռանկարում են դիտարկվում «**Idea of Cosmic and Social Recurrence in Armenian Intellectual Tradition (The Epic Sasna Tsrer and Moses Khorenatsi)**» հետազոտական ակնարկի մեջ¹⁴: Կամ մեկ այլ՝ «**Պատմական ժամանակի կառույցը և բովանդակությունը (Մեծ Հայքը Ք. ա. II-Ք. հ. V դդ.)**» հետազոտական ակնարկի¹⁵ գրեթե բոլոր հիմնակազմիկ գաղափարներն ու հղացքներն իրենց ուրույն ներկայությունն ունեն գրքի մեջ ներառված 15 հետազոտական ակնարկներում:

Տարժամանակյա և համաժամանակյա չափույթների համադրման արդյուն-

8 Անդ:

9 Անդ, էջ 12:

10 Անդ, էջ 412:

11 Անդ, էջ 8 և 413:

12 **Ալբերտ Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 413:

13 Անդ, էջ 16-17 և 23-24:

14 Անդ, էջ 359-365:

15 Անդ, էջ 121-167:

քում ընթերցողը հնարավորություն ունի բացահայտելու արդեն քաղաքակրթության **Իմաստաբանական գիրքը**:

2. Պատմության տեքստի նշանային (սեմիոտիկ) շարակարգը

Պատմության նշանային շարակարգի կերպափոխության մեջ կարևոր դիտանկյուններից է նաև **հեղինակի** վերածումը **Տեքստային ռազմավարության**, որի համապատկերում պատմագետի **պահուստի նյութերից** (շուրջ 100 հետազոտական ակնարկ) ընտրված տասնհինգ հետազոտական ակնարկները շարակարգվում են ըստ նշանային լեյտմոտիվի: Ընդ որում՝ բնաբան-լեյտմոտիվները ոչ միայն ուղենիշներ են տվյալ բաժնի ընթերցման համար, այլև ակնարկներ են հաջորդ բաժինների ընթերցման: Ավելին՝ շնորհիվ բնաբան-լեյտմոտիվների՝ ներհյուսվում-արտահյուսվում է մետատեքստը, որի համապատկերում **Գիրքը** լիովին արդիականացնում է իր բովանդակային ներունակությունը: Ասվածն ավելի շոշափելի դարձնելու համար ստորև տալիս ենք այդ բնաբան-լեյտմոտիվները՝

Մուտք – «Հարկավ, Բախտը հանապազ խաղեր է հյուսում և նոր արացումներ հավելում մարդկության կյանքի խաղընթացին» (Պոլիբիոս, Համընդհանուր պատմություն, I, 4,2):

Գործք – «Կամով իմով և ծախքով, երբ դեռ տասնինն էի, գորք համագրեցի և փրկեցի Հանրապետության ազատությունը, որ բռնադատվել էր դավադիրներից» («Գործք աստվածային Օգոստոսի», I, 1):

Գրույթ – «[...]սակայն բազում գործք արութեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի» (Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, I, 3,4):

Իմաստ – «Ձի պատմությունն իմաստասիրությունն է, որ ուսուցանում է ըստ (կոնկրետ) օրինակների» (Դիոնիսոս Հերակլացի, Արվեստ ճարտասանության, XI, 2):

Ավարտ – «[...]թերևս միակ ուղին՝ հաղթահարելու Բախտի վայրիվերումները՝ այլոց փորձի վերհիշումն է» (Պոլիբիոս, Համընդհանուր պատմություն, I, 2,5):

Վերոհիշյալ մեջբերում-հղումներն առանձնահատուկ են նրանով, որ հանդես են գալիս տարածական (մեջբերվող հեղինակների բնակության վայրերը) և ժամանակային (մեջբերվող հեղինակների ապրած ժամանակները) մեծ ընդգրկմամբ: Ըստ այսմ՝ տարածական հեռանկարը (լոկալ և գլոբալ լծորդմամբ) համադրվում է ժամանակային հեռանկարի (անցյալ-ներկա-ապագա լծորդմամբ) հետ: Իսկ պատմագիտական խնդրարկում-տագնապի պարագայում հնարավոր է առանձնացնել հավանական այն տիրույթները, որտեղ բնաբան-լեյտմոտիվների հեղինակների (**Պոլիբիոս-աստվածային Օգոստոս-Մովսես Խորենացի-Դիոնիսոս Հերակլացի-Պոլիբիոս**) հայեցակարգերը միահյուսվում են: Հենց այդ հնարավոր տիրույթներում էլ ուրվագծվում են ընթերցում-մեկնումի հիմքերն ու հենքերը, որոնց վրա էլ կազմակերպվում է տեքստը, որն իր մեջ պարառում է օտարի (Պոլիբիոս, Աստվածային Օգոստոս, Դիոնիսոս Հերակլացի) և սեփականի (Մովսես Խորենացի) կերպափոխությունը: Այս համապատկերում մեկնությունը ծավալվում է նոր նշանակություններով, հատկապես երբ դրանք դիտարկվում ենք **արիստոտելյան** արդեն նշված դիտանկյունից, այն է՝ ըստ սկիզբ, միջին և ավարտ հղացքների: Այլ կերպ ասած՝ **Մուտք և Գործք** բաժինները հենց այն «իմաստային սահմանն» են ներկայացնում, երբ հեղինակը տարանջատվում է առտնին տարածությունից: Շնորհիվ այդ տարանջատման՝ հնարավոր է ինքնադիտումը **Գործքի** համածիրում, որտեղ հեղինակի աշխատանքն այլևս ինքնընթաց չէ: Նման տարանջատմամբ հնարավոր է դառնում ուրվագծել նաև պատմության բանակա-նացման գործընթացը, երբ, հաբերմասյան եզրաբանությամբ ասած, պետք է

ԳՐԱԿՆՈՍՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Է (ԺԳ) ԳՐԱԿՆՈՍՄՈՒԹՅԱՆ ԻՄԱՆՈՒՄ ԵՒ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ
Ի ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ ԵՒ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՄ

անցում կատարվի «կենսաշխարհից» դեպի «համակարգ»¹⁶: Համադրվում են **Բախտն** ու **Կամքը**. «[...] Զի պատմագետից պահանջվում է բռնություն կիրառել սեփական անցյալի և դրա արդյունքների նկատմամբ: Անմիջական նպատակն է հաղթահարել դրանց տարտամությունը և պարտադրել միասնական պատումի որակներ»¹⁷:

Մի նոր հարացույց, ինչպես իր հետազոտական ակնարկներից մեկում է նշում հեղինակը (թեպետ այլ առնչությամբ, բայց և շատ համահունչ մեր ասածին), երբ հեղինակային մտահղացումն ու կամքն արդեն գիտակցվում են «իբրև արդյունազորության կարևորագույն բաղկացուցիչ»¹⁸:

Միջին ռիթմի դեպքում հանդիպում են «ելակետային տարրերը (կամ պատճառները)», որով և կազմավորվում–հայտնակերպվում է Պատմության **Գրույթը**: Այլ կերպ ասած՝ **Բախտն** ու **Կամքը** համադրվում են **Հիշատակ/Հիշումի** մեջ, որը ենթադրում է «անցյալի ընդհանրացում ըստ որոշակի ճանաչողական հղացքի»¹⁹:

Այս համապատկերում էլ կազմակերպվում է պատմագիտական նոր հեռանկարը, որտեղ արդեն հանգուցալուծումն է՝ հեղինակի ստեղծարար ներուժի կայացումը՝ **Իմաստը**: Այստեղ **Հիշատակը** բացվում է **կոնկրետ օրինակներով այլոց փորձի հիշատակումով**, գի «պատմական ճշմարտությունը գործընթաց է, բայց ոչ մեկընդմիշտ հաստատված և անփոփոխ կարգավիճակ: Գործընթաց, որը կարիք ունի անընդհատ օրինականացման (legitimation)» և «իրականացվում է նախ և առաջ իմաստային հղումների ճանապարհով»²⁰: Հենց նման ըմբռնմամբ է, որ, թերևս, տեղի է ունենում ընթերցողի և հեղինակի հանդիպումը, ընդ որում հեղինակային բազմաձայնության համաձիբում:

Այսու՝ տիպաբանական դիտարկումի դեպքում վերոհիշյալ ծավալումներն ընթանում են մարդակերպության (անթրոպոմորֆիզմի) գործառույթներին համահունչ (Պլատոնական հայեցակարգ): Ընդ որում մի կողմից՝ իբրև **գրույց–խնջույք**, մյուս կողմից՝ իբրև «**մտքի թատրոն**»: Այս ճանապարհին հեղինակը, մեկնարկելով պատմության երևութենական համաչափություններից, կազմակերպում է **Պատումի** բովանդակային կառույցը և հանգում քաղաքակրթական ինքնությանը: Այլ կերպ ասած՝ երկբևեռ (Պլատոն և Արիստոտել) եռաչափությամբ հեղինակին հաջողվել է ստեղծել պատմագիտական–հետազոտական մի ուրույն կառույց, որն այժմ բանաձևվում է իբրև **պատմության պոետիկա** և որը ենթադրում է ստեղծագործական լարում և մշտական ինքնալացում:

Ուշագրավ է նաև **Մուտք** և **Ավարտ** բաժինների բնաբան–լեյտմոտիվներում կրկնվող «**Բախտ**» հղացքը: Ընդ որում, երկու անգամ էլ հղվում է միևնույն հեղինակին՝ Պոլիբիոսին: Վերջինս «**Համընդհանուր պատմության**» ամենասկզբում նշում է, որ «**Բախտը**» օյկումենտի բոլոր գործերը մեկ նպատակի է հանգեցրել, և որ **ընթերցողին անհրաժեշտ է ճանաչել նրա գործելու եղանակը** (I, 4:1–2): Չմանրամասնելով Պոլիբիոսի պատմատեսության մեջ «**Բախտ**» հղացքի այլազան դրսևորումները՝ ուշադրություն դարձնենք «**Բախտ**»–ի և «**Հեղինակ**»–ի նշանային համընկնմանը, որտեղ «**Բախտը**» հանդես է գալիս իբրև **Հեղինակ**–ի դիմակ: **Հեղինակ**–ի և **Բախտ**–ի նշանային ազգակցությունը բուն տեքստի մեջ չի բովանդակվում իբրև նրա գծային լեզվաբանական դրսևորման (manifestation) ակնհայտ բաղկացուցիչ, այլ «արդյունք է մի տեքստից մյուսի բխեցման բավականին բարդ գործընթացի, որը հիմնվում է ընթերցողի միջտեքստային ձեռնա–հատության (competence) վրա»²¹: Այսու՝ գործ ունենք մի կողմից՝ **Հեղինակ**–ի (**Բախտ**–ի) կամքի, մյուս կողմից՝ ընթերցողի բանական և գործողութենական կամքի հետ: Դրանց «հանդիպման» ծիրում էլ ի հայտ է գալիս պատմության մեկ–

16 J. Habermas, Op. cit., p. 153–197.

17 Ալբերտ Ստեփանյան, նշվ. աշխ., էջ 8–9:

18 Անդ, էջ 285:

19 Անդ, էջ 18:

20 Անդ, էջ 191:

21 U. Eco, U. Eco, The Role of the Reader: Explorations in the Semiotics of Texts (Advances in Semiotics), Bloomington, Indiana UP., 1984, p. 4.

նությունը: Այստեղ կարևորն այն է, որ **Հեղինակ-ի (Բախտ-ի) տեքստի մեկնությունն իրականացվում է նաև ընթերցողների մասնակցությամբ**: Եվ պատմության ընթերցման-մեկնության հաջողումը կամ ձախողումը մեծավ մասամբ պայմանավորված են բանական մղումի կամ ծրագրերի առաջադրվածությամբ, ինչպես Պոլիբիոսի մոտ պատմական իրադարձությունների հաջողումը կամ ձախողումը [Polyb, V-88:3]²²:

Ըստ այդմ՝ հեղինակի տեքստն ըմբռնելու համար հույժ կարևորվում է նրա «գործելու եղանակի» վերհանումը («**Հարկավ, Բախտը հանապազ խաղեր է հյուսում և նոր սրացումներ հավելում մարդկության կյանքի խաղընթացին**» - Պոլիբիոս): Այստեղ առավել քան ակտիվ է հեղինակի «խնամակալության», քան թե «գերակայության» հղացքը: Հենց այս կիզակետում է, որ նաև կարելի է ենթադրել պատմագիտական նոր դպրոցի կայացման հնարավորությունը («**Կամով ինով և ծախքով, երբ դեռ տասնինն էի, գորք համագրեցի և փրկեցի Հանրապետության ազատությունը, որ բռնադատվել էր դավադիրներից**» - Գործք աստվածային Օգոստոսի): Այս կիզակետում է, որ կարող է իրականանալ մտավոր և հուզական սահքը օտարի և սեփականի միջև, միմյանց հարաբերակցել մշակութային (լոկալ) իմաստը և քաղաքակրթական (գլոբալ) նշանը («**[...]սակայն բազում գործք արութան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս, եւ արժանի գրոյ յիշատակի**» - Մովսես Խորենացի): Թերևս այս կիզակետում կարելի է և ենթադրել աշակերտների հնարավոր ներկայությունը («**Ձի պատմությունն իմաստասիրությունն է, որ ուսուցանում է ըստ (կոնկրետ) օրինակների**» - Դիոնիսոս Հերակլացի): Վերջապես հենց այս կիզակետում է, որ ի հայտ է գալիս հեղինակի բազմաձայնությունը, որտեղ հեղինակ-ուսուցիչն աշակերտներին է վերադառնում-հայտնակերպվում իբրև այլընտրանքային փորձառություն: Ընդ որում այն կազմակերպվում է բարտյան կառուցվածքային **շեղումի (distorsion) և անշրջելիության (irréversibilité)** սկզբունքների²³ հակադիր համաձիթում, այն է՝ **այլացումի (altérité)** և **շրջելիության (réversibilité)** ապակառուցվածքային հեռանկարում («**[...]թերևս միակ ուղին՝ հաղթահարելու Բախտի վայրիվերումները՝ այլոց փորձի վերհիշումն է**» - Պոլիբիոս): Դրանցից առաջինը (այլացումը), լծորդվելով երկրորդին (շրջելիությանը), «հետագոտական սպասումին» և «ընթերցողական սպասումին» հաղորդում է լրացուցիչ իմաստանշանային խորություն: Այն է՝ «լողացող միկրոկառույցը» հընթացս ծավալվում է իբրև «բաբախող մեգակառույց» և հակառակը:

Ըստ այսմ պատմագիտական տեքստը (տվյալ դեպքում՝ Գիրքը) ևս ծավալվում է բազմաչափության ռիթմով. այն ներառում է ոչ միայն տեքստի իրական սահմանները (հետագոտական ակնարկներ), այլև արտասիրական և վերհիրական սահմանները (ընթերցանություն)՝ ընթերցողի հոգեմտավոր կարության ծիրում ձևավորելով ամբողջի այլացած-այլացող ընկալումը (հակառակ հեռանկար): Այլ կերպ ասած՝ գործ ունենք մի տեքստի հետ, որը, Ումբերտո Էկոյի դիպուկ ձևակերպմամբ, կարող ենք ոչ միայն ազատորեն մեկնաբանել, այլև համա-ստեղծել (cooperatively generated)²⁴: Այն է՝ «բնագրային տեքստը» հնարավոր է դառնում վերակազմակերպել հաղորդակցության առանձնահատուկ ռազմավարությունների հեռանկարում՝ հիմնված նշանակությունների ձկուն համակարգի վրա: Այստեղից էլ՝ «Պատմությունը հոլովոյթ է, որի արդյունքները շատ առումներով պայմանավորված են նրա կրողների մտահոգևոր հորիզոնով: Հորիզոն, որի տկարության պարագային նրանք կարող են հայտնվել պատմության կրավորական արձանագրողի կարգավիճակում»²⁵:

22 Polybius, The Histories, Greek texts with an English translation by W.R. Paton in Six Volumes, Cambridge, Massachusetts: Harvard University Press, Volume III of the Loeb Classical Library, 1979, p. 215.

23 Տե՛ս **R. Barthes**, Analyse textuelle d'un conte d'Edgar Poe, In Claude Chabrol (et al.), Sémiotique narrative et textuelle. Paris: Larousse, 1973, p. 53.

24 Տե՛ս **U. Eco**, Op. cit., p. 3.

25 **Ալբերտ Ստեփանյան**, նշվ. աշխ., էջ 11:

Ամփոփում

Արեւրտ Ստեփանյանի պատմության տեսությունը բազմաչափ ինքնայլացմամբ օժտված պատմագիտական-հետազոտական մի ուրույն կառույց է, որ բանաձևվում է իբրև **պատմության պոետիկա**: Ուշագրավ է, որ հեղինակն «ըստ զարգացման սկզբունքի» (Արիստոտել) կառուցված **պատումը** լծորդել է հոգու կառույցի (Պլատոն) հետ՝ մարդակերպ-մարդակենտրոն, ուստիև պատումն այստեղ իր խորքային բովանդակությամբ մարդակերպ-մարդակենտրոն է: Իսկ այս փոխլրացական կառույցը հնարավոր է դարձել **քաղաքակրթական ինքնության** համապատկերում: Արդյունքում ստեղծվել է միահյուս պատումային մի չեզոքություն, որտեղ մի կողմից՝ բացվում է **քաղաքակրթական մետատեքստը**, մյուս կողմից՝ **իմաստաբանական պատումային խաղընթացը**: Ըստ այսմ՝ տարածական հեռանկարը (լոկալ և գլոբալ լծորդմամբ) համադրվում է ժամանակային հեռանկարի (անցյալ-ներկա-ապագա լծորդմամբ) հետ՝ մի կողմից՝ իբրև **գրույց-խնջույք**, մյուս կողմից՝ իբրև **«մտքի թատրոն»**: Այն կազմակերպվում է **այլացումի** և **շրջելիության** ապակառուցվածքային հեռանկարում: Այսու՝ հեղինակին հաջողվել է ոչ միայն լիովին արդիականացնել պատմության տեսության իմաստային, այլև գրքի բովանդակային ներունակությունը:

Վերոհիշյալ դիտարկումի համատեքստում մեկ այլ կարևոր դիտանկյուն ևս՝ պատմագետի անհատականության և պատմագետների արհեստավանդի (դպրոց)՝ իբրև «մեկ-բազումի շրջուն համահարաբերակցության» խնդիրը: Պլատոնի նշանավոր խոսքերի շրջափոխմամբ կարող ենք ասել, որ **մարդկությունը չի ձերբագասովի պատմագիտական ճգնաժամից, քանի դեռ պատմագիտությամբ չի զբաղվում մարդկանց այն տեսակը, որն անդավաճան նվիրումով ու խորությամբ է վերաբերվում պատմությանը**: Մի տեսակ, որի կյանքն ու գրույթն արտահայտում են իրականության ավելի խորքային իմաստները՝ արդեն ըստ «հավանականության և անհրաժեշտության»:

Սմբատ Խ. Հովհաննիսյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է պատմագրության, քաղաքակրթության, նշանագիտության և պատմության տեսությունների, նախաարդյունաբերական և արդյունաբերական դարաշրջանների հայ և համաշխարհային առևտրական կապիտալի ուսումնասիրության հիմնախնդիրները:

Summary

POETICS OF HISTORY AND POSSIBILITY OF HISTORICAL WRITING

(Considerations on the Monograph of Albert A. Stepanyan “The Trace of History: Deeds, Writings, and Essence”)

Smbat Kh. Hovhannisyan

Key words – Civilization, civilization identity, discours, Synchrony and diachrony measurement, Lifeworld and System, Semiotics syntagma, poetics of history.

Summing up the considerations, it must be point out that the monograph represents a research space aimed at the interpretation of past in the light of

poetics of history. It has been built up in accordance with the development principle (Aristotle), on one the hand, and on the concept of tripartite Soul (Plato), on the other hand. The both approaches make up the anthropomorphist mode of author's narrative. As a result, the civilization identity (of eminent personalities) initiates various scenarios of past, present and visible future.

The space perspective (with its local and global dimensions) in harmony with the perspective of time (past, present and future) initiates a dialogue-symposium and an intellectual theatre. They are set up on the alteration and reversibility of ideas, concepts and axiological orientations giving opportunity to the author to build up his research activity according to contemporary historical theories.

Another problem is also in the focus of the author. It concerns the problem of relationship of historian's personality with the guild of historians reaching in its highs the reversibility of the both poles. Metaphrasing Plato's words, one could define that the crisis of history is insuperable unless it is a field of activity of men who act with profound knowledge, skills and devotion. This shapes a kind of researchers whose life and writing express the more profound layer of reality according to "necessity and probability". The monograph under consideration meets all these demands of modern historiography and marks a new level of historical research.

Резюме

ПОЭТИКА ИСТОРИИ И ВОЗМОЖНОСТЬ ИСТОРИЧЕСКОГО ПИСЬМА

(Размышления о монографии Альберта А. Степаняна
"Перспектива истории: Деяния, Письма и Смысл")

Смбат Х. Оганнисян

Ключевые слова – Цивилизация, цивилизационная идентичность, дискурс, синхронное и диахронное измерение, Жизненный мир и система, семиотическая синтагма, поэтика истории.

Подводя итог соображениям, скажем, что монография представляет собой пространство исследования, нацеленное на интерпретацию прошлого в свете поэтики истории. Она была написана в соответствии с принципом развития (Аристотель), с одной стороны, и с представлением о тройственной природе души (Платон) – с другой. Эти два подхода составляют антропоморфный характер нарратива автора. В результате цивилизационная идентичность (выдающихся лиц) инициирует различные сценарии прошлого, настоящего и видимого будущего.

Пространственная перспектива (с ее локальными и глобальными измерениями) в гармонии с перспективой времени (прошлое, настоящее и

будущее) инициирует пир-диалог и интеллектуальный театр. Они организуются на изменении и обратимости идей, понятий и аксиологических ориентаций, дающих возможность автору создать свою научно-исследовательскую деятельность согласно современным историческим теориям.

Еще одна проблема находится в фокусе внимания автора. Это касается проблемы отношения индивидуальности историка к гильдии историков, достигающих обратимости обоих полюсов. Перефразируя слова Платона, можем сказать, что кризис истории непреодолим, если это не сфера деятельности людей, которые действуют с глубоким знанием, навыками и преданностью. Это формирует род исследователей жизнь и письмо которых выражает более глубокий уровень действительности согласно "необходимости и вероятности". Рассматриваемая монография удовлетворяет всем этим требованиям современной историографии и устанавливает новый уровень исторического исследования.